ARMENIAN NATIONAL PLATFORM
EASTERN PARTNERSHIP CIVIL SOCIETY FORUM

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

# ԵՄ-ՀՀ «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԻՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

- Հայաստանի եվրոպական ինտեգրման բնագավառում և/կամ ՀԸԳՀ-ով սահմանված ոլորտներից որևէ մեկում առնվազն 3 տարի ակտիվ գործունեության իրականացում, որոնց արդյունքներով կազմվել է(են) զեկույց(ներ), այդ թվում՝ հետազոտություններ, վերլուծություններ, հայեցակարգեր և այլն (առավելագույնը 5 միավոր),
- Կազմակերպության կարողությունները, այդ թվում՝ աշխատակազմ, ֆինանսավորում, գրասենյակային տարածք, կայք և այլն (առավելագույնը 3 միավոր),
- Հանրային հեղինակությունը և մեծ թվով կազմակերպությունների հետ արդյունավետ և կառուցողական համագործակցություն իրականացնելու ունակությունը (3 միավոր),
- ՀԸԳՀ-ի իրականացման գործում պետական կառավարման մարմիններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու տեսլականը (առավելագույնը 3 միավոր),
- ՀԸԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման տեսլականը (3 միավոր),
- Անգլերենի իմացությունը. որպես անգլերենի բավարար մակարդակի իմացության ապացույց՝ դիմողը ներկայացնում է բարձրագույն կրթության պրոցեսն անգլերենով անցնելու մասին փաստաթուղթ: Հակառակ դեպքում դիմողն անցնում է Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված որակավորված մասնագետի կողմից անգլերենի ստուգում (առավելագույնը 3 միավոր), Հանձնաժողովը կարող է սահմանել նվազագույն չափանիշներ:

**Թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը 20-ն է:**